ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2

ք.Երևան «02» 11 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզիյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ**» **շինարարական նորմերի մշակման** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25% չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով[1] նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն

---

[1] *Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ	ք. Երևան, Չարենցի 1
կառավարական տուն 3	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ 2470100038500000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01503291
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան	---------- Գ. Ազիզյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«02» 11 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200/626		ՀՀ դրամ	7 800 000	7 800 000	1	ք. Երևան և ՀՀ մարզեր	Պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 260-րդ օրացուցային օրը ներառյալ

Տեխնիկական բնութագիրը	
Իրավիճակի համառոտ նկարագիրը	ՀՀ տարածքում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համա նկուղային և որմնախարսխային հարկերի, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղիների նախագծման, քաղաքացիական պաշտպանության կառույցների սենքերի (ապաստարանների և/կամ թաքստոցների) տեղակայման (ներկառուցման) նորմերը, տեխնիկական պահանջները (շահագործման կամ օգտագործման բոլոր փուլերի համար) ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով հստակեցված չեն: ՀՀ-ում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների նախագծման նորմատիվային դաշտը բացակայում է: Անհրաժեշտության դեպքերում, նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներն իրականացվում են Ռուսաստանի Դաշնությունում գործող <СП 88.13330.2014 Защитные сооружения гражданской обороны> շինարարական նորմերի կիրառմամբ, որը ՀՀ տարածքում չի գործում: Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N757-Ն որոշման, ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրության՝ ՀՀ տարածքում բնակչությունը պետք է ապահովված լինի քաղաքացիական պաշտպանության կառույցներով (սենքերի՝ ապաստարանների և թաքստոցների) հասարակական և բնակելի նշանակության օբյեկտներում: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և կարևորելով բնակչությանը քաղաքացիական պաշտպանության կառույցներով ապահովման անհրաժեշտությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն նախաձեռնել է քաղաքաշինության ոլորտի մի շարք նորմատիվատեխնիկական փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների նախագծման նորմերի մշակման գործընթաց: Աշխատանքային խմբի նախապատրաստական աշխատանքներին ներգրավվել են ՀՀ արտակարգ իրավիճակների և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները: Խնդիրը կարևորվում է հատկապես բնակելի և հասարակական նշանակության շենքերի, այդ թվում կրթական և առողջապահական հաստատությունների և այլ օբյեկտների նկուղային հարկերում ներկառուցված քաղաքացիական պաշտպանության պաշտպանական սենքերի (ապաստարան, թաքստոց) նկատմամբ պարտադիր պահանջների սահմանման անհրաժեշտությամբ:
Նորմատիվ փաստաթղթերի (ՀՀ շինարարական նորմերի) մշակման (տեղայնացման) աշխատանքների համառոտ բնութագիրը	«Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերը պետք է մշակվեն (տեղայնացվեն) Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության և ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: **Նախատեսվում է.** - ուսումնասիրել Ռուսաստանի Դաշնության և այլ առաջադեմ երկրների փորձը, - ուսումնասիրության արդյունքներով հստակեցնել սահմանվող նորմերի պահանջների

	շրջանակը - հավաքագրել ելակետային տվյալները և վերլուծել միջազգային, տարածաշրջանային՝ եվրոպական ու միջպետական, ինչպես նաև ազգային փաստաթղթերով ամրագրված պահանջները և դրանց համադրելիության հնարավորությունը, ՀՀ տարածքում քաղաքացիական պաշտպանության պարտպանական կառույցների անհրաժեշտ տեսակներն ու դրանց հզորությունները՝ հաշվի առնելով հանրապետության բնակավայրերի կառուցապատման առանձնահատկությունները, գոյություն ունեցող շենքերի և շինությունների տեխնիկատնտեսական ցուցանիշները:
Նորմատիվ փաստաթղթերի (ՀՀ շինարարական նորմերի) մշակման (տեղայնացման) աշխատանքների հիմնավորումը և նորմատիվային պահանջները	**Հիմնավորում՝** «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 29.06.2017թ «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N757-Ն որոշում, ՀՀ կառավարության 26.05.1999թ <Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին> N351 որոշում **Աշխատանքների կատարման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր (ելակետային նյութեր)՝** - տեխնիկական առաջադրանք - պետական գնման պայմանագիր - շահագրգիռ պետական մարմինների առաջարկություններ (ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե (որպես համակարգող մարմին), ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան): **Նորմատիվ փաստաթղթի մշակում ըստ իրավական ակտերի պահանջների՝** - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման, - ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-Ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման, - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 <Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար> շինարարական նորմերի հաստատման մասին> N253-Ն հրաման - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր>, - <Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք, - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշում - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին>: - ՀՀ քաղաքաշինության նախարարի 31.03.2014թ <ՀՀՇՆ 31-01-2014 <Բնակելի շենքեր.Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 93-Ն հրաման - ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014թ <ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» Շինարարական նորմերը հաստատելու մասին> N103-Ն հրաման - ՀՀՇՆ 20-06-2014 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում.Հիմնական դրույթներ» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ

	քաղաքաշինության նարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին>, ՀՀ քաղշին նախարարի 24.03.2014թ թիվ 87-Ն հրաման, - ՍՆիՊ 2.08.02-89 <Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция>)
Նորմատիվատեխնիկական փաստաթղթի կազմը, բովանդակությունը, կառուցվածքը	**Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի կազմը և բովանդակությունը՝** ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերին համապատասխան (ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.03.2014թ N65-Ն հրաման) **Փաստաթղթի կառուցվածքը** - կիրառման ոլորտին վերաբերող դրույթներ, - նորմատիվային վկայակոչումներ, - տերմիններ և սահմանումներ (քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներին առնչվող սահմանումների, կոնստրուկտիվ լուծումների, հետազննության, կառուցման, շահագործման վերաբերյալ), - ընդհանուր դրույթներ պաշտպանական կառույցների տեսակի (երկակի նշանակության պաշտպանական սենքեր՝ որպես ապաստարաններ, թաքստոցներ ծառայելու) վերաբերյալ, - առանձին և ներկառուցված քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների (շինությունների) ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները, - պաշտպանական կառույցների (ապաստարանների, թաքստոցների) հիդրոմեկուսացման և հերմետիկացման պահանջները, ցուցանիշները, - պաշտպանական կառույցների կոնստրուկտիվ համակարգի վրա ազդող դինամիկ բեռների ազդեցության հաշվարկը, - պաշտպանական կառույցների ներքին հաղորդակցուղիների համակարգերը՝ օդափոխության, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորության, հակահրդեհային և կապի ցանցերը, - պաշտպանական կառույցների հետազննման մեթոդաբանությունը, - հիմնական դրույթներ, որոնք կապահովեն շենքերի և շինությունների նկուղային և/կամ կիսանկուղային (որմնախարսխային) հարկերում ապաստարանների կամ թաքստոցների նախատեսման նախագծային լուծումների վերաբերյալ, - սահմանել կիրառվող շինարարական նյութերին, կոնստրուկցիաներին և սարքավորումներին ներկայացվող պահանջներ:
Նորմատիվ փաստաթղթի (ՀՀ շինարարական նորմերի) մշակման (տեղայնացման) աշխատանքների կատարման ժամկետը	**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ** Աշխատանքների կատարման ժամկետ սահմանել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ **260 օրացուցային օր՝** ներառյալ մշակված փաստաթղթի նախագծի քննարկման և հաստատման համար անհրաժեշտ ժամկետները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գրասենյակային գործություն
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291
Տնօրեն՝
---------- Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 02 » 11 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 02 » 11 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5.1
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «30» 10 2020թ.**

<<Հայնախագիծ>> ԲԲԸ, ի դեմս Ընկերության տնօրեն **Գրիգոր Ազիզյանի,** անձնագիր AM 0408409, տրվ.05.08.2011թ. 011-ից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

ընկերության անվանումը

ք.Երևան, Չարենցի 1

ընկերության հասցեն

<<Արդշինբանկ>> ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2470100038500000

ընկերության բանկային հաշվեհամարը

01503291

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գրիգոր Ազիզյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **<<Հայնախագիծ>> ԲԲԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **<<Արդշինբանկ>> ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **2470100038500000**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01503291**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **780 000 /յոթ հարյուր ութսուն հազար/**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ , AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Տնօրեն՝ **Գ.Ազիզյան** /_____/ Գլխ. հաշվապահ՝ **Վ.Բադիկյան** /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝	"___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 4.2
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «30» 10 2020թ.**

<<**Հայնախագիծ**>> **ԲԲԸ,** ի դեմս Ընկերության տնօրեն **Գրիգոր Ազիզյանի,** անձնագիր AM 0408409, տրվ.05.08.2011թ. 011-ից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ընկերության անվանումը

ք.Երևան, Չարենցի 1
ընկերության հասցեն

<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2470100038500000
ընկերության բանկային հաշվեհամարը

01503291
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գրիգոր Ազիզյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **<<Հայնախագիծ>> ԲԲԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **<<Արդշինբանկ>> ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **2470100038500000**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01503291**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900008000664	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **7 800 000 /յոթ միլիոն ութ հարյուր հազար/**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ , AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Տնօրեն՝ **Գ.Ազիզյան** /_____/ Գլխ. հաշվապահ՝ **Վ.Բադիկյան** /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝	"___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*